

կարչագեղ տեղ մըն է. կը տարածուի Հաւաշ, Վարձէճ ու Գեղեքէօ լեռներու ծաղկազարդ հովիտին մէջ, Ար ու Նաճ գետակներու եզերքը: Հունդարական հին վիճակ մըն է. անունը առած Փաթայէն, Ապայի պալատներէն մէկէն, որ դեռ 1100-ի ատենները բերդ մը կառուցանել տուած էր այդ վիճակին մէջ: Դարեր վերջ, էկէրի ալ թուրքերու ձեռքն իյնալէն յետոյ, իբր անուանի եւ արդաւանդ կալուած մը՝ Սուլթանին կալուածներուն կցուեցաւ. եւ հետեւաբար Վէզիրի զիւմէթ-ին կը պատկանէր: Ժէ դարուն, Ապետիքի խնդրագրէն շուրջ 15 տարի առաջ, 1669-ին Փրանկիսկիոս Համպայի քաղաքապետի մահէն վերջ, Փաթան՝ Աղամ Փորկաճ-ի նուիրուեցաւ: Հեւեշ դաւառին մէջ, այս շրջանին, թուրք-հունդար առանձնայատուկ կեանք մը դոյութիւն ունէր. գիւղերու մէջ հունդարացի երկրատէրեր կը տիրէին՝ թուրք պաշտօնեաներու ձեռքին տակ: Միայն 1689 Հոկտեմբեր 16-19ի շրջանին, Հեւեշ դաւառը քրիստոնէայ բանակին ձեռքը անցաւ առանց սուրի հարուածի միակ: Գիւղերու մէջ, ու նաեւ քաղաքներու մէջ ալ շատ թուրք ընտանիքներ հաստատուած էին, որոնց սերունդները այսօր ալ կ'ապրին:

Առաջին կարելիութեան ի դերեւ ելլելով, մշտական ճամբորդ եւ ծերանալու մօտեցող Ապետիք՝ հոս կ'ուզէր հաստատուիլ ու հայրենիք մը գտնել: Փաթայի նրա իրատուութեան նամակը ստորագրած է Լէոփոլտ, 1684 Յունուար 14-ին, Լինցի մէջ, իբր թագաւոր Հունդարիոյ: Այս վրկայաթուղթին մէջ սա կալուածը համարժէք կը նկատուի Անդրէաս Զայիի կալուածներուն, որոնց նախապէս փափաքած էր Ապետիք: Եւ մանաւանդ թէ կոմսութեան բարձրացումի հետ կապ ունեցող «Փաթայի» մակերիւն ալ կ'ընդունի: Թէեւ նուիրատուութեան հետեւանքով ինքը կրօնաւոր ինքզինքը նոյնպէս «Փաթայի» կոչել, այնու հանդերձ վաւերագրին մէջ յատու-

Լ Ո Ւ Ի Փ Ա Ս Տ Է Օ Ռ

(1822 - 1895)

ԻՐ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

(Շար. Բագմ. 1955, թիւ 1-2, էջ 21)

2.

Դափնիներու շուքին տակ

Միթէ փառքի ու պսակի պէտք ունէ՞ր Փաստէօն: Ան՝ մանկութենէն մինչեւ կենացը վերջին օրը՝ կեանքը կը բոլորէր զափնիներու շուքին տակ, համակ մարդկութեան յարաճուն երախտիքին արժանալով: Ծիչտ է, երկար ժամանակ հաւածուեցաւ ու նախատուեցաւ, բայց վերջ ի վերջոյ, երբ մարդիկ կ'անդրադառնային այդ հանճարին բացառիկ արժանիքներուն, կը մոռնային այլեւս ամէն թըշնամանք, ու կենացը վերջին օրերուն՝ արժանաւորապէս կը յարգէին ու կը պատուէին դայն:

Այս մեծ մարդուն կենսագրականը վերջացնելէ առաջ, կ'արժէ որ պահ մըն ալ վայելենք իր յաղթանակի օրերուն պերճանքը եւ ողբերգութիւնը անոնց վահու-թեամբը:

Բագմաթիւ առիթներով, ինչպէս որ տեսանք, Փաստէօն անձն ու անունը բացառիկ մեծարանքներու կ'արժանանային: Արքաներէն սկսեալ մինչեւ յետին դիւղացին ու հովիւը, քանիցս իրենց յարգանքն ու երախտիքը կը մատուցանէին այս մարդուն:

Կէն կը յիշատակուի սա: Ուրեմն այսպէս սով Ապետիք Հունդարացի կալուածատէր եղաւ:

Թրգմ. Հ. Ա. ՅՈՎՈԼԵԱՆ

(Շարունակելի)

Ի մասնաւորի կատաղութեան դէմ մըղած պայքարին եւ ձեռք բերած զգայացունց յաղթանակներուն շնորհիւ, մեծապէս կը բարձրանար Փաստէօնի հանճարին հմայքը:

Այդ դիւտէն ետքն է որ Փաստէօն երիցս կը փառաւորուէր, ու մասնաւոր յիշատակութեան արժանի են 1885ի, 1886ի եւ 1892ի շրջանի հանդիսակատարութիւնները:

Առաջինը՝ տեղի կ'ունենար 26 Հոկտ. 1885ին, Գիտութեանց Կաճառին մէջ: Այդ նիստի ընթացքին էր որ Փաստէօն կը հրապարակէր կատաղութեան դէմ դաւաճարմանը, գիտնականներու չքախումբին առջեւ, ու կը յայտարարէր փոքրիկ Մէսթրի վրայ կատարած մարդկային առաջին յաջող փորձը:

Վիւրեան ոտքի կանգնելով, հետեւեալ ներողականը կը բանաձեւէր. « Բժշկական ու վիրաբուժական յանձնախումբերու անդամի հանդամանքովս կը յուսամ, թէ Կաճառը ինձ թոյլ պիտի տայ խօսք առնելու եւ արտայայտելու հիացման զգացումներս, որոնք պարոն Փաստէօնի հաղորդագրութիւնը ինձ ներշնչեցին: Կանխաւ վստահ եմ, որ համայն բժշկական դասը մասնակից պիտի ըլլայ այս զգացումներուս:

«Կատաղութիւնը՝ այդ ահուկի հիւանդութիւնը՝ որուն դէմ կիրարկուած բոլոր դարմանումները ապարդիւն անցած էին մինչեւ այսօր, վերջապէս բուժելի դարձած է: Պարոն Փաստէօն՝ որմէ առաջ ոչ ոք ընթացած էր իր որդեգրած ճամբէն՝ առաջնորդուեցաւ, շնորհիւ շարք մը յարատեւ պրոպոմներու, որոնք տարիներ տեւեցին, յղանալու որոշ դարմանակերպ մը, որուն շնորհիւ՝ վստահօքէն կարելի է արդիւնէ կատաղութեան ընթացքը, նոր վարակուած հիւանդի մը քով»:

Վիւրեանի կը յաջորդէր Պուլէյ. «Իրաւունք ունինք յայտարարելու, կ'ըսէր ան, թէ այս օրուան նիստը յաւէտ յիշատակութեան արժանի պիտի մնայ, թէ՛ բժշկու-

թեան պատմութեան եւ թէ Ֆրանսական դիտութեան տարեգրութեանց մէջ, որովհետեւ այն կը մարմնացնէ բժշկութեան մէջ մինչեւ ցարդ չտեսնուած մեծագոյն յառաջադիմութիւններէն մին, որ կը ձգտի դարմանել այնպիսի հիւանդութիւն մը, որ աշխարհիս սկիզբէն ի վեր՝ դարերու հոլովոյթին համընթաց՝ մեղի կը կտակուէր իր անդարմանելիութեամբը: Այս օրուրնէ սկսեալ, մարդկութիւնը կատաղութեան ճակատադրականութեան դէմ պայքարելու, եւ անոր չարադուշակ հետեւանքները կանխելու աղեցիկ միջոցով մը զինուած է:

«Պարոն Փաստէօնի կը պարտինք այս բարիքը, եւ որքան ալ հիացում ու երախտիք յայտնենք, այն ճիւղերուն համար որ այսքան զեղեցիկ արդիւնքներով պսակուեցան՝ քիչ է: Մեծ աղբի մը համայն մտաւորականութեան անունով, եւ անոր բարձրագոյն ատեանէն արտասանուած վերոյիշեալ արտայայտութիւններուն եւ գնահատանքներուն առջեւ, կը նսեմանան արքայական շքանշաններու փայլը, ինչպէս նաեւ ոսմիկին կողմէ արձակուած թըմբկահարութիւններուն որոտը»:

Իրենց սրտաբուխ պարզութեամբ իսկ, գիտնականներու բերնէն ելած այս զեղեցիկ դրուագները բաւական էին արդէն անմահացնելու Փաստէօնի հանճարը:

Այլեւս կարելի էր մի միայն կաճառներու պատերուն մէջ արգելափակել Փաստէօնի փառքը: Հանրութիւնն ալ, իր ընտրելագոյն ներկայացուցիչներով, նախաձեռնարկ կը հանդիսանար փառաբանելու դայն, 1886-ին, աննախընթաց շուքով ու տօնակատարութիւնով մը:

Ան՝ տեղի կ'ունենար Թրոքատերոյի ընդարձակ ու շքեղ դահլիճին մէջ, Փաստէօնի ակադեմական բարեկամներու հովանաւորութեան ներքեւ, ու Շառլ Ռիչէի եւ Կասդոն Տիսանդրէի նախաձեռնութեամբ:

Այդ օրը, մեծահոգակ արուեստագէտ-

ներ իրենց սիրալոթար ու թանկագին մասնակցութիւնը կը բերէին, արժանաւորաբար կերպով անմահացնելու համար Փաստէօնի անունը:

Սրահը բերնէ բերան լեցում էր, եւ որոտընդոտ ծափահարութիւններու եւ կեցցէներու թռուրտէն մէջէն, Քոքլէնի ջինջ ու առնական ձայնը կը լսուէր, ողջունելու համար Փաստէօնի մուտքը հանդիսարանէն ներս:

«Եւ Աստուծոյ արարչութեան մէջ,
Մեծազոյնները անոնք են՝
Որոնք իրենց հանճարովը,
Նահանջի կը մատենեն մահը»:

Հանդէսին ամենայուրից մասը՝ ղեկարարական բաժինն էր: Սէն-Սանի, Մասընէի եւ Կունոյի ստեղծագործութիւններէն ընտրեալ կտորներու նուագէն ետք, ուսական երգչախումբը բեմ կը բարձրանար, ու իր խորհրդաւոր եւ մեղմադճոտ երգերով կը համակէր սրահը:

Յանկարծ, մեծահոգի Կունոն ղեկավարութիւնը կը ստանձնէր տալիզահարներու եւ ջութակահարներու ընկերացող երգչախումբին, ու Աւէ Մարիա-ն նուագել կու տար:

Հրաշափառ այդ աղօթքը, ղինքը ստեղծագործող վարպետին մոգական դաւադանին հարուածներուն ներքեւ, ներկաներուն հոգիին ջինջ աղանդներէն անցնելով, դէպի վեր կը բարձրանար, փառարանելու համար Արարչին մեծազոյն ստեղծագործութիւններէն մին՝ Փաստէօնը:

Երբ տակաւին ներկաներուն հոգիներուն մէջ կը թրթռային աստուածապարզ եւ այդ մեղեդիին վերջին վանկերը, անոնք՝ զմայլելով աղանատես կ'ըլլային հոգեպարար ուրիշ երեւոյթի մը, տեսնելով Կունոյի վեհօրէն դէպի Փաստէօն դառնալն ու զոյգ ձեռքերով անոր ողջոյնի համբոյրներ ուղղելը:

Հանճարը հանճարին հարկը կը վճարէր: Տօնակատարութիւններէն ետք,

Փաստէօնի տրուած պատուոյ սեղանին, մեծ դիտնականը խօսք առնելով կ'ըսէր. «Միթէ յուզիչ տեսարան մը չէ՞ր վայելքը այս անմահ երգահաններուն՝ երջանիկ մարդկութեան այդ մեծ կախարհներուն՝ որոնք ի սպաս դրին իրենց փառահեղ աշակցութիւնը, ի պատիւ անոնց՝ որոնք կը ցանկան ուսանիլ ու ծառայել տառապող մարդկութեան: Դուք ալ, մեծ դեղարուեստագէտներ ու դերասաններ՝ ձեր թանկագին մասնակցութիւնը բերիք: Զեղմէ իւրաքանչիւրը հրամանաւոր դօրալարի մը կը նմանէր, որ բանակին մաս կադմելով, կը ջանար աւելի կորով ու աւելի եռանդ ներշնչել հաւաքական զգացումի մը: Ինձ չափ դժուար է նկարագրել զգացածս: Արդեօք ինձի թոյլ պիտի տրուի՞ խոստովանելու, թէ ձեզ բոլորիդ ալ առանցն անգամ ըլլալով ունկնդրելու առիթը ունեցայ: Կենացս ընթացքին, չեմ կարծեր թէ տասը անգամէ աւելի թատրոն դացած ըլլամ: Բայց ասկէ ետք, այլեւս վշտահար ըլլալու պատճառ մը չունիմ, նկատի ունենալով որ քանի մը ժամուան ընթացքին, դուք ինձի պարզեցեցիք՝ իր համեղ ու խրտացեալ վիճակին մէջ՝ այն վայելքները, որոնցմէ շատերը ամիսներու եւ տարիներու ընթացքին հաղիւ թէ կարելի ըլլայ ըմբոշխնել»:

Երբ որ դ հանդիսակատարութիւնը, Փաստէօնի մահէն մօտաւորապէս երեք տարի առաջ տեղի կ'ունենար, ու նուիրուած էր իր եօթանասունամեակին:

Մի միայն Պրանսան չէր որ կը տօնէր մեծ դիտնականին յորելանը. 1892-ին շարք մը ուրիշ երկիրներ ալ կը փառաւորէին Փաստէօնի բազմամեայ գործունէութիւնը: Պրանսայի մէջ, այդ տարւոյն Նոյեմբեր ամսուան ընթացքին էր, որ Բժշկական Կաճառին կողմէ պրոֆ. Պուշտու եւ Կիւլքոն նախաձեռնարկ կը հանդիսանային այդ տօնակատարութիւններուն:

Հանդէսը տեղի կ'ունենար 27 Դեկտ. 1892-ին, Սուրպոնի ընդարձակ սրահին

մէջ: Ներկայ էր Պրանսայի եւ զանազան երկիրներու մօտաւորական ընտրանին, իր կաճառներուն, համալսարաններուն ու բարձրագոյն կրթական հաստատութիւններուն ներկայացուցիչներով: Հոն էին նաեւ Փաստէօնի արժանաւոր աշակերտներուն շքախումբը՝ տոքթ. Քարմէթ, Մէլէիքոֆ, Ռու, Շանպեղան եւ Տիւքոյ՝ որոնք հետագային մէկ մէկ հեղինակութիւններ դարձան, նոր ու օգտակար ղեկավարով ճոխացնելով բժշկական զիտութիւնը:

Հոն էին նաեւ նախարարները, երեսփոխանական եւ ծերակուտական ժողովներու ատենապետներն ու անդամները: Ժամը տասն ու կէսին, Փաստէօն Հանրապետութեան նախագահին՝ Քառնոյի թեւը մրտած, կու դար դրաւելու իրեն յատկացուած պատուոյ աթոռը: Նախ եւ առաջ, Հանրային կրթութեան նախարարը՝ Շաու Տիւքուին՝ խօսք առնելով կը բանար հանդէսը, եւ ի մէջ այլոց կ'ըսէր. «Ո՞վ կըրնայ ըսել այս պահու, թէ ի՞նչ կը պարտի ձեզ մարդկային կեանքը, եւ այն ինչ որ պիտի պարտի ձեզի ժամանակի ընթացքին: Պիտի դայ օր մը, ուր նոր օրերու Լուկրետ մը, իր նոր երկին մէջ պիտի երդէ անմահ վարդապետին հանճարը, որ յղացաւ այսքան բարիքներ»:

«Ան՝ պիտի չնկարագրէ զայն իբր մեղեակաց եւ անդայ մը, ինչպէս որ բանաստեղծը ներկայացուցած է իր հերոսը, այլ պիտի պատկերացնէ զայն իր ժամանակին ապրումներուն, հայրենիքին տրտութիւններուն եւ ուրախութիւններուն մասնակից եղող մէկը, որուն զոյնութիւնը բաժնուած էր զիտական պրպտումներու խոտաբարոյ վայելքներուն եւ ընտանեկան բոյնի քաղցրարոյր զեղումներուն միջեւ:

«Այդ բոյնին մէջ՝ Փաստէօն շրջապատուած էր սիրելիներէ եւ կեանքի ընկերուհիէ մը, որ կըրցած էր ո՛րքան ղինքը լաւ հասկընալ, նոյնքան ալ սիրել: Ան կը վայելէր այն առօրեայ քաջալերանքն ու տես-

կան խրախոյսը՝ որոնց բացակայութեանը թերեւս իր երկարատեւ մաքառումները խլէին իրմէ իր կորովը, տկարացնէին իր յարատեւութիւնը եւ մթաղնէին իր հանճարը: Կը մաղթեմ որ տակաւին երկար տարիներ Պրանսան զձեզ իր ծոցին մէջ վայելէ, եւ հպարտանայ ձեզմով՝ նկատելով ձեր անձը՝ իր սիրոյն, երախտազիտութեանն ու հպարտութեանը թանկագին առարկան»:

Նախարարին այս հոգեւէն ուղերձէն ետք, Գիտութեանց Կաճառին նախագահը՝ պարոն Ապատի, Փաստէօնին կը նուիրէր շքանշան մը, որուն մէկ երեսին վրայ իր ղէմքը նկարուած էր, իսկ միւս կողմը՝ զափնիներու եւ վարդերու միջեւ հետեւեալ բառերը քանդակուած էին. «Նուէր Փաստէօնի, իր եօթանասունամեակին առթիւ, երախտապարտ Պրանսայի եւ մարդկութեան կողմէ»:

Անդղիացի հռչակաւոր վիրաբոյժ Լիսթըն ալ կը բացազանչէր. «Դուք էիք որ վերցուցիք այն քողը, որ դարերէ ի վեր կը ծածկէր փոխանցիկ հիւանդութիւններու զաղտնիքը, դուք դառաւ եւ ապացուցիք, թէ անոնք մանրէներու հետեւանքն են»:

Փաստէօն կ'ողջագուրէր Լիսթըրը, որմէ անցեալին մէջ ալ յաճախ զնահատանքի եւ երախտիքի խօսքեր լսեր էր:

Ձանազան միութիւններու կողմէ բանաձեւուած ուղերձներէն ետք, Փաստէօնի կը նուիրուէր իր ծննդավայրի հայրենակիցներուն ստորագրութիւնները պարունակող հաւաքածոյ մը, որուն մէջ զետեղուած էին Փաստէօնի ծննդավայրին մէկ օրինակն ու հայրենական տան նկարը: Ի վերջոյ, Փաստէօնի կողմէ, իր դաւակը, հետեւեալ պատասխանը կը կարդար եղած մեծարանքներուն առթիւ.

«Հանրապետութեան Տիար Նախագահ,
«Զեր ներկայութիւնը ամէն ինչ կը յաղարկէ, մտերմիկ հանդէս մը՝ մեծ տօնի կը վերածուի, եւ շնորհիւ ձեզի՝ դիտնա-

կանի մը պարզ տարեգարձը, Փրանսական զիտութեանց տարեգրութեանց մէջ, ան- մոռանալի թուական մը կը կերտէ:

«Տեարք Նախարարներ եւ Պարոնայք, Այս հանդիսութեանց փայլին մէջ, իմ առաջին մտածումս՝ տխրութեամբ հա- մակուած՝ շարք մը զիտութեան մարդոց յիշատակին կը նուերեմ, որոնք մի միայն դժուարութիւններ կրեցին: Անցեալին մէջ անոնք ստիպուեցան պայքարիլ նա- խապաշարումներու դէմ, որոնց ազդեցու- թեան ներքեւ՝ իրենց զաղափարները խեղ- դամահ կ'ըլլային: Անոնց յաղթելէ ետք մինչեւ իսկ՝ անոնք բախեցան ամէն տե- սակի արգելքներու եւ խոչընդոտներու»:

«Տակաւին քանի մը տարի առաջ, նախ քան իշխանութիւններուն այս շքեղ հա- տատութիւնները զիտականներու պարզե- լելը, մարդ մը՝ որուն հանդէպ անսահման սէր եւ յարգանք կը տածէի՝ Քլոտ Պեո- նար՝ իբր աշխատատեղի ունէր, ասկէ քանի մը քայլ անդին, խոնաւ ու գետնա- փոր ցած մասան մը: Հաւանականօրէն հոն էր որ կը վարակուէր այն հիւանդու- թեանէն, որ զինքը գերեզման իջեցուց: Այժմ, տեսնելով ինձ վերապահուած յար- վանքը, ամէն բանէ առաջ՝ անոր յիշա- տակն էր որ կը պատկերանար մտքիս մէջ»:

«Յարգալից կը խոնարհիմ անոր առ- ջեւ»:

«Տեարք, ինձ կը թուի, թէ ճարտար փափկանկատութեամբ մը ճգնած էք աչ- քերուս առջեւ պատկերացնել ամբողջ կեանքս: Ժիւռայի հայրենակիցներէս մին՝ Տոլի քաղաքապետը՝ ինձ բերած է այն անշուք տանը պատկերը, ուր՝ զրկանքով լի կեանք մը անցուցին հայրս ու մայրս»:

«Էջով-Նորմալի բոլոր աշակերտներուն ներկայութիւնը ինձ վերջիշէլ կու տայ՝ զիտական ոգեւորութիւններուս սկզբի օ- բերու շլացուցիչ յափշտակութիւններս»:

«Լիլի համալսարանին ներկայացուցիչ- ները՝ ինձ կ'ողբկոչեն բիւրեղացման եւ խմորումներու մասին կատարած սկզբնա-

կան պրպտումներս, որոնք քողազերծ կ'ը- նէին ինձ համար բոլորովին նոր աշխարհ մը»:

«Ի վիճակի չեմ բացատրելու ձեզ, ինչ- պիտի՝ յուսադրութիւններով համակուե- ուեցայ, երբ նախազգացումը ունեցայ թէ շատ մը մթին երեւոյթներու ետեւը օրէնք- ներ քողարկուած էին: Նոյնքան ինձ հա- մար դժուար է բացատրել, թէ փորձա- ոտական վարդապետութեան հետեւողի հանգամանքովս՝ որպիսի՝ տրամաբանա- կան վերլուծումներով հնարաւոր կը դառ- նար ինձ հասնելու բնախօսական երե-ւոյթներու ուսումնասիրութեանը»:

«Սիրելի արուեստակիցներս, դուք այս ամէնուն ականատեսը հանդիսացաք: Եթէ պատահեցան պարագաներ, որոնց ընթաց- քին բուն վիճաբանութիւններով խան- գարեցի երբեմն մեր կաճառներու խաղա- զութիւնը, անոնք պէտք է վերադրել ճշ- մարտութիւնը մոլեղնօրէն պաշտպանելու կիրքիս»:

«Իսկ դուք, օտար երկիրներու պատուի- րակներդ, որ հեռուներէն եկած էք ձեր համակրանքին հաւաստիքը յայտնելու Ֆրանսայի, կը պարգեւէք գերազոյն վա- յելքը մարդու մը, որ անդրդուելիօրէն կը հաւատայ, թէ զիտութիւնն ու խաղաղու- թիւնը պիտի յաղթանակեն տգիտութեան ու պատերազմին, եւ թէ ժողովուրդները իրարհասկացողութեան պիտի գան՝ ոչ թէ քանդելու, այլ շինելու համար, ու ապա- գան պիտի պատկանի անոնց՝ որոնք առա-ւելագոյն չափով նպաստած պիտի ըլլան տառապող մարդկութեան: Այս խօսքերս ձեզի է որ կ'ողբեմ, սիրելի Լիսթրը, եւ ձեզի՝ զիտութեան, բժշկութեան եւ վիրա- բուժութեան ականաւոր ներկայացուցիչ- ները»:

«Իսկ դուք՝ երիտասարդներ, նուիրուե- ցէք այն վստահ ու կենսունակ զործելա- կերպերու ուսումնասիրութեան, որոնց նախնական գաղտնիքներուն միայն ծանօթ ենք: Բոլորդ ալ, ինչ որ ալ ըլլայ ձեր

ընտրած ասպարէզը, երբեք մի՛ վարակ- ուիք նուաստացուցիչ ու ամլացուցիչ յո-ւետեսութեանէ, երբեք մի՛ յուսալքուիք տխուր երեւոյթներէն, որոնք երբեմն կու գան ու կ'անցնին ազգի մը վրայէն: Ապ-րեցէք տարրալուծարաններու եւ մատե- նադարաններու ջինջ խաղաղութեանը մէջ»:

«Եւ ամէն բանէ առաջ, դուք ձեզի հարցուցէք. Ի՞նչ ըրի իմ զարգացումիս համար. ապա, ժամանակի ընթացքին՝ Ի՞նչ ըրի երկրիս համար, մինչեւ այն օ-րը, որ դուցէ բախտը ունենաք ըմբոշի- նելու այն մեծ երջանկութիւնը խորհելով, թէ որ եւ է կերպով նպաստած էք մարդ-կութեան յառաջադիմութեան ու բարօ-րութեան: Ինչ չափով ալ որ կեանքը նը- պաստած ըլլայ ձեր ճիւղերուն, պէտք է՝ երբ գերազոյն վախճանին կը մօտենաք՝ իրաւասութիւնը ունենաք ըսելու. «Կարե- լիս ըրի»:

«Տեարք, ձեզ կը յայտնեմ խորին յու- դումս ու երախտագիտութիւնս: Ինչպէս որ այս շքանշանին ետեւը, մեծ արուես- տագէտը՝ Ռոքիմ՝ վարդերու տակ սքողած է կենացս վրայ ծանրաբեռնուած թուա- կանը, նոյնպէս ալ դուք, սիրելի արուես- տակիցներս, փափաքած էք տալ ինձ սա կենսարուիս ու խանդավառ երիտասար- դութեան տեսիլքը, կարենալ առաւելա- գոյն չափով ոգեւորելու ծերութիւնս»:

Փաստէօտի այս գեղեցիկ ճառը զիտում- նաւոր կերպով իր լրիւ վիճակին մէջ տը-ւինք, նկատի ունենալով անոր դիւթիչ ու բաղմամբիս նկատումներով հրահանգիչ պարունակութիւնը:

Կարելի է զայն Փաստէօտի վերջին տա- րիներու պատգամադիրը նկատել, աւելի ճիշտ՝ թանկագին կտակը, ուր բառերէ աւելի հոգեկան զմայլելի գանձեր կը չո-ղան: Ամէն մարդ, ինչ տարիքի եւ դա- սակարգի ալ պատկանելու ըլլայ, կրնայ անկէ բան մը իւրացնելով, իր հոգին վե-րացնել ու ազնուացնել:

Մեծ զիտականն ու առաքեալն է, որ իր ամբողջական փնտութեամբը այդ տո-ղերուն մէջէն յարութիւն առնելով, մեր աչքերուն առջեւ կը ցցուի, ու մշտահոս ներշնչումի ազդիւրը հանդիսանալով՝ սի-րոյ, պարկեշտութեան ու աշխատասիրու- թեան երկրպագուն կը դարձնէ:

Պարկեշտ ու հանճարեղ զիտականին կողքին, վառվռուն հայրենասէրն է որ կը պատկերանայ, ու անոր բերնով՝ մեծ մարդասէրն է որ կը պատգամէ. «Թշուա- ոին չեն հարցնել թէ ո՞ր մէկ երկրին կամ կրօնքին կը պատկանիս: Անոր պէտք է ը-սել՝ տառապեալ մըն ես, աղքատը բա-ւական է: Դու ինձ կը պատկանիս, եւ ես քու ցաւերդ պիտի ամօքեմ»:

Նոյն այդ մարդասէրն է որ կը հաւա-տայ մարդկային եղբայրակցութեան եւ չինարար աշխատանքին մօտալուտ յաղ-թանակին:

Կասկածէ դուրս է որ բացառիկ մեծու- թիւն մըն է Փաստէօտ, ու մեզմէ իւրա-քանչիւրը ո՛չ միայն բան մը ունի անկէ ստրկելիք, այլ նաեւ՝ բան մըն ալ կը պար-տի: Իւրաքանչիւր անհատ՝ առանց ցեղի եւ կրօնքի խտրութեան, պէտք է երախ-տագիտութեամբ կրէ անոր յիշատակը իր սրտին մէջ:

Մենք սիրով յանձն առինք զայն հայ ընթերցողին ծանօթացնել, պարզապէս մարդկութեան ընտրելագոյն մէկ անդա-մին՝ հոգեկան եւ իմացական արժանիք- ներէն եւ անոնց սփռած բարիքներէն յա-փրշտակուած:

Մեր այս ձեռնարկը իրականացնելու համար, մեծապէս օգտուեցանք Փաստէօ-տի արժանաւայել փեսային՝ Ռոնէ Վա-լետի Ռատոյի զրէչն ելած ընդարձակ եր-կին մէջ գտնուող վաւերագրերներու հա-ւաքածոյէն:

Փաստէօտի կեանքին նուիրուած այդ գրքին ճակատին, իր ականաւոր աշակերտ- ներէն՝ տոքթ. Ռու այսպէս կ'արտա-

